

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Տեխնիկական պայմանների նախագծերի համակարգող

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Առողջության ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի վայրը

քաղաք Երևան, Աբովյան 62

Աշխատանքի նկարագիր

- Ընկերության ուժերով իրականացվող տեխնիկական պայմանների առաջարկների խոշորացված նախահաշիվների կազմում, դրանց լուծումների տեղում ստուգում, վերանայում, համակարգում;
- Ընկերության հետ պայմանագրային կարգով աշխատող նախագծային կազմակերպությունների աշխատանքների համակարգում, Ընկերության ուժերով տրված տեխնիկական պայմանների առաջարկների հիմքով, այդ նախագծային կազմակերպությունների կողմից իրականացված նախագծա-նախահաշիվային փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրում, տեխնիկական և նորմատիվային լուծումների ստուգում, կատարողական ակտերի և ժամկետների հսկում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման ելակետերի ստուգում և համապատասխան միացման նախահաշիվների կազմում;
- Նախագծման ենթակա տեխնիկական պայմանների առաջարկների հիմքով նախագծային կազմակերպությունների կողմից ներկայացված նախագծա-նախահաշիվային փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրում, տեխնիկական և նորմատիվային լուծումների ստուգում;
- Ընկերության կայքում տեղադրված շին. մոնտաժային միավոր գների եռամսյակային ժամկետների հսկում և համակարգում:

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն;
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ;
- Թիմային աշխատանք;
- Հաղորդակցման հմտություններ;
- Կազմակերպչական ունակություններ;
- Համակարգչային հիմնական կիրառական ծրագրերի տիրապետում (Ms Office, PowerPoint, G Suite);
- Վարորդական վկայականի պարտադիր առկայություն:

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV հայերեն կամ անգլերեն լեզուներով am.water.hr@veolia.com էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Տեխնիկական պայմանների նախագծերի համակարգող**: Հարցազրույցի կիրավիւրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: